Կազմված է 12 սեպտեմբերի 2023թ.
Բաղկացած է 2 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՐՏՆՅՈՐ»
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության
մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողովի
12 սեպտեմբերի 2023 թվականի
թիվ 12092023 արձանագրությամբ

Տնօրեն՝ Արթուր Սամվելի Մուրադյան

(ստորագրություն)

12 սեպտեմբերի 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 10.03.2009թ.
գրանցման համար՝ 15.110.00535
ՀՎՀՀ՝ 06107901
08.06.2012թ. գրանցված կանոնադրության
թիվ 009.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
19 սեպտեմբերի 2023թ.

աշխատակից՝

# «ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՐՏՆՅՈՐ»

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություն)

2023թ.

«ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՐՏՆՅՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրանցված կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

Ա) Կանոնադրության «8. Ընկերության կառավարում» գլխի 8.2 կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

*«8.2 Ընկերության Ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններն են՝*

1) *Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ինչպես նաև կազմակերպություններ հիմնադրելու կամ նրանց մասնակցելու հարցերը.*
2) *Ընկերության կանոնադրության, հիմնադիր փաստաթղթերում փոփոխումը.*
3) *Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.*
4) *Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (այսուհետ՝ կառավարիչ) տալու հարցերը.*
5) *վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարումը.*
6) *Ընկերության հաշվետվությունների (այդ թվում տարեկան, կիսամյակային, միջանկյալ) և տարեկան հաշվեկշռի հաստատումը.*
7) *Ընկերության շահույթն ընկերության մասնակիցների միջև բաշխելու մասին որոշումն ընդունելը.*
8) *Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը (հաստատումը).*
9) *Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշումն ընդունելը.*
10) *Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը.*
11) *Ընկերության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումն ընդունելը.*
12) *Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.*
13) *Ընկերության գործունեության տեսակի և ծավալների փոփոխում.*
14) *Ընկերության կողմից անշարժ գույք(եր)ի ձեռքբերման և օտարման մասին որոշումն ընդունելը.*
15) *Ընկերության կողմից անշարժ գույք(եր)ի օգտագործման նպատակային նշանակությունների մասին որոշում ընդունելը.*
16) *Ընկերությանը պատկանող անշարժ գույքերի՝ երրորդ անձանց իրավունքներով (գրավ, վարձակալություն) ծանրաբեռնելու մասին որոշումն ընդունելը.*
17) *Ընկերության կողմից վարկերի, փոխառությունների, ներդրումների ներգրավման մասին որոշումն ընդունելը (բացառությամբ Ընկերության մասնակիցների կողմից ներգրավվող փոխառությունների).*
18) *խոշոր կամ փոխկապակցված գործարքների կնքման մասին համաձայնություն տալը, եթե գործարքի արժեքը գերազանցում է 40,000,000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամը.*
19) *Ընկերության ղեկավար պաշտոններին (գլխավոր տնօրեն, ֆինանսական տնօրեն, գլխավոր հաշվապահ, ստորաբաժանումների ղեկավարներ) աշխատողների նշանակումը/ազատումը.*
20) *Ընկերության բիզնես պլանի և բյուջեի հաստատումը.*

*21) Ընկերության կողմից առաջարկվող պահեստի տրամադրման և հարակից ծառայությունների գնացուցակի հաստատումը.*
*22) Ընկերության կողմից դատական գործերի ներգրավման, նախաձեռնման հարցի որոշումը, եթե վեճի առարկան գույքային է և գերազանցում է 40,000,000 (քառասուն միլիոն) ՀՀ դրամը.*
*23) Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:»:*

Բ) Կանոնադրության «8. Ընկերության կառավարում» գլխի 8.3 կետի 2-րդ պարբերությունը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
*«Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի 2/3 (երկու երրորդը):»:*

Գ) Կանոնադրության «8. Ընկերության կառավարում» գլխի 8.3 կետի 4-րդ և 5-րդ պարբերությունները փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
*«Սույն կանոնադրության 8.2 կետի հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ձայների թվի 2/3 (երկու երրորդով):»:*

Դ) Կանոնադրության ««ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՐՏՆՅՈՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների ցուցակ» վերտառությամբ հավելվածը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՐՏՆՅՈՐ » ՍՊԸ
կանոնադրության հավելված

# «ԱՐՄԱՆ ԸՆԴ ՊԱՐՏՆՅՈՐ»

## ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

### մասնակիցների ցուցակ

| Անուն Ազգանուն / Անվանում | Բաժնեմասերի արժեքը (ՀՀ դրամ) | Բաժնեմասի չափը (%) | Ստորագրություն |
|---|---|---|---|
| Քաղաքացիությունը՝ Հայաստան<br>Անունը, ազգանունը՝ Սիլվա Արեսի Գյոզալյան<br>ՀԾՀ՝ 5503510305<br>Նույնականացման քարտ՝ 007653728 տրված՝ 07.08.2015թ.-ին, 011-ի կողմից<br>հաշվառման հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արամի փ., 48 շ., բն. 74 | 25,000 | 50% | [signature] |

| | | | |
|---|---|---|---|
| Քաղաքացիությունը՝ Վրաստան<br>Անունը, ազգանունը՝ Դիմիտրի Կալանտարով<br>Անձնագիր՝ 20AD70218,<br>տրված՝ 03.05.2022թ.,<br>Արդարադատության նախարարության կողմից,<br>անձնական համար՝ 01001000849,<br>հաշվառման հասցեն՝ ՎՀ, ք. Բաթումի, Շերիֆ Խիմշիաշվիլի պողոտա, շենք 7դ, բնակարան 4549 | 25,000 | 50% | |